ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 1, 1962 Общественные науки

Էդ. Շ. Հարությունյան

ԱՆԴՐԵԱՍ ՓԱՓՈՎԻՉԻ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԸ

Անդրեաս Փափովիչը 19-րդ դարի առաջին կեսի հայ բնափիլիսոփայական մտքի ականավոր ներկայացուցիչներից է, որը բնագիտական, հատկապես կենսաբանական գիտությունների նվաճումներն օգտագործելով, կատարել է իմաստասիրական հետաքրքիր և ինքնուրույն ընդհանրացումներ և դրանով իսկ իր լուման մտցրել հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ։

Փափովիչը ծնվել է 1809 թվականին, Հունգարիայի Սուշավա քաղաքում։ 1826 թվականին ընդունվում է Բուդապեշտի բժշկական համալսարանը, որը և մեծ հաջողությամբ ավարտում է 1831 թվականին։ 1840—42 թվականներին Փափովիչը տեղափոխվում է Կ. Պոլիս, որտեղ և մինչև իր կյանքի վերջը (1858) աշխատում է որպես բժիշկ։ Բնութագրելով Փափովիչի բժշկական գործունեությունը, Վ. Թորգոմյանը գրում է. «Բժիշկ բազմազբաղ, մեծահամբավ և տաղանդավոր, իր ժամանակակից հայ բժշկներուն պես, «պալատական» կամ «արքունի բժիշկ» չեղավ. լոկ ժողովրդական բժիշկ մը եղավ անտիտղոս՝ այլ պաշտելի ժողովրդական», որի սիրտը «...միշտ ազգային առողջապահության զարգացման համար կբաբախեր»[1]։

Պոլսում անմիջականորեն ծանոթանալով հայ ժողովրդի լայն զանգվածների կուլտուր-կենցաղային, սանիտարական ու բժշկական անմխիթար վիճակին, Փափովիչը իր առջև խնդիր է դնում բժշկական պրակտիկ գործունեության հետ զուգահեռ զբաղվել նաև հայ ժողովրդի լուսավորության, բժշկական-առողջապահական գիտելիքների պրոպագանդայով։ Այս նպատակով 1850 թ. նա հրատարակում է իր «Արուեստ երկայնակեցութեան՝ որ է առողջ, երկայն ու երջանիկ ապրելու ուսումը» 400 էջանոց ուսումնասիրությունը, որն արդյունք էր նրա ութամյա քրտնաջան աշխատանքի։ Գիրքը լավ ընդունելություն է գտնում ընթերցասեր հասարակության կողմից։ Որի տարածման ու ժողովրդականացման հիմնական գործոններից էին նրա բովանդակության գիտականությունը, մատչելիությունը, պարզ, գեղեցիկ ու վայելուչ լեզուն և հատկապես այն, որ հարմար էր ժողովրդական մտքին ու հայ ընտանիքների կենցաղային ու ներքին կյանքին։ Այս աշխատությունը շատ բարձր է գնահատվել Վ. Թորգոմյանի և ակադեմիկոս Լ. Հովհաննիսյանի կողմից[2]։

Փափովիչի այս աշխատությունը բաղկացած է երկու մասից։ Առաջին մասում խոսում է մարդու և կենդանու կապի, մարդու բիոլոգիական պրոցեսների բնականության մասին, իսկ երկրորդ մասում տրվում է մարդու հոգեկան կարողությունների և բնության ու մարդու ֆիզիոլոգիական պրոցեսների հետ նրանց ունեցած կապը։ Զգալի տեղ է հատկացված նաև ընդհանրապես դաս-

---

[1] *Հանդէս Ամսօրեայ, Վենետիկ, 1894, էջ 219։*

[2] Տե՛ս Л. Иоанисян, История медицины в Армении, ч. IV, стр. 125—130.

տիարակության ու կրթության և հատկապես բարոյական դաստիարակության հարցերին։

Ի հակադրություն իդեալիզմի և կրոնի, որոնք մարդուն կտրում են բնությունից և հակադրում նրան, Փափովիչը, հարելով անտրոպոլոգիական փիլիսոփայության սկզբունքներին, պաշտպանում և հիմնավորում է այն տեսակետը, թե մարդը բնության ծնունդ է, նրա մասնիկը։ Մարդուն չի կարելի բացարձակապես հակադրել բնությանը, կենդանական աշխարհին, քանի որ նա «մասնավոր և բարձրագույն կարգի կենդանի է»[3], որի գոյությունը և գործունեությունը անխզելիորեն կապված է բնության հետ, պայմանավորված է բնությամբ։

Փափովիչը գիտական չի համարում այն մոտեցումը, երբ մարդու էությունը փորձում են բացատրել բնությունից կտրված, երբ հաշվի չի առնվում այն բացառիկ դերը, որ կատարում է բնությունը մարդու կյանքում։ Հենց այդպիսի, իշխող, իդեալիստական աշխարհայացքն է նա ի նկատի առնում, երբ նշում է, որ մարդու էության բացատրությունը չպետք է փնտրել «փիլիսոփայական դպրոցներում»։ Դրանք անտեսելով բնության դերը մարդու կյանքում, չեն կարող գիտական պատկերացում տալ այն մասին, թե ինչ տեղ է գրավում մարդը աշխարհում, ո՞րն է նրա կյանքի նպատակը[4]։ Փափովիչը հասկանում է, որ այդպիսի իդեալիստական սիստեմներից և կրոնական աշխարհայացքից մարդիկ երջանիկ կյանքի հասնելու համար օգտակար հետևություններ չեն կարող անել։ Ամեն տեսակի գիտելիքի, այդ թվում և մարդու էության, նրա նպատակների մասին գիտելիքի աղբյուրը, ըստ Փափովիչի, ինքը բնությունն է։ Ուսումնասիրիր բնությունը, ճանաչիր բնությունը, նրա օրենքները՝ դու կարող ես ճանաչել նաև մարդու էությունը։ Այս է նրա դեիզը։ Նրա եզրակացությունները բնության և մարդու անատոմիա-ֆիզիոլոգիական կառուցվածքի և հոգևոր կարողությունների ուսումնասիրության արդյունքն են։ Երբ Փափովիչը հանդես է գալիս որպես բնախույզ-բժիշկ, ապա նա զարգացնում է բնության ինքնագոյության սկզբունքը և պնդում, որ բնության մեջ գործող բոլոր օրենքները, մարդու բոլոր կարողությունները ոչ թե գերբնական, այլ բնական ծագում ունեն։ Այս դեպքում Փափովիչը տարերայնորեն կանգնած է մատերիալիզմի դիրքերում։ Սակայն ինչպես ժամանակի շատ բնագետներ, այնպես էլ նա, չկարողանալով լրիվ ազատվել իշխող իդեալիստական աշխարհայացքի ազդեցությունից, նրանից որդեգրում է իդեալիստական որոշ դրույթներ, որոնք անհամատեղելի են նրա բնագիտական սկզբունքների հետ։ Այդպիսի դեպքում Փափովիչը պնդում է, որ նյութականը աստվածային ստեղծագործության արդյունք է և որ բնության մեջ գոյություն ունի նպատակայնություն։ Որոշ դեպքերում Փափովիչի աշխարհայացքում նկատելի են պանթեիզմի տարրեր։ Փափովիչի աշխարհայացքի այդ հակասությունները բացատրվում են 19-րդ դարի կեսերին հայ տնտեսական, հասարակական-քաղաքական և գաղափարական կյանքում գոյություն ունեցող պայմաններով։

Հենվելով իր ժամանակաշրջանի բնագիտության նվաճումների վրա, զարգացման էվոլյուցիոն թեորիայի վրա, Փափովիչը, Ֆիզիկա Պողոսի նման[5]

3 Ա. Փ ա փ ո վ ի չ, Արուեստ երկայնակեցութեան, Կ. Պոլիս, 1850, էջ 8։

4 Տե՛ս նույն տեղում, էջ 5։

5 Տե՛ս Ֆ ի զ ի կ ա Պ ո ղ ո ս, Ատենարանութիւն դպրոցական, «Աստղիկ Արևելյան», 1855, էջ 121։

գտնում է, որ բոլոր երևույթներին հատուկ է զարգացումը։ «Ամենէն մեծ օրենքը,—գրում է նա,—որուն նույնիսկ բնութիւնը իր գործքերը կերպավորելու, կազմելու ատենը կրհետևի, ամեն բան կամաց-կամաց ու աստիճան-աստիճան յառաջագեմ տանելն է»[6]։ Բնության երևույթները, առարկաները գտնվում են ծագման և զարգացման պրոցեսում, նրանք մեկընդմիշտ տրված, վերջնականապես ձևավորված, անփոփոխ բաներ չեն, այլ անընդհատ կազմվում և կատարելագործվում են։ Արժեքավոր է ոչ միայն այն, որ Փափովիչը ընդունում է բնության զարգացումը, այլև այն, որ նա նկատում է զարգացման վերընթաց բնույթը՝ պարզից դեպի բարդը[7]։ Նկատելի է նաև, որ բնության երևույթների զարգացման աղբյուրը Փափովիչը տեսնում է հենց բնության մեջ։ Այդ զարգացումը պայմանավորված չէ գերբնական ուժերով, այն օբյեկտիվ օրինաչափություն է։

Բնության և մարդու փոխհարաբերության հարցը Ա. Փափովիչի բնափիլիսոփայության հիմնական խնդիրներից է։ Մարդը, ըստ Փափովիչի, բնության մասն է։ Նա ընդգծում է այն բացառիկ դերը, որ կատարում է բնությունը մարդու կյանքում։ Մարդու գոյության պատճառը, հիմքը Փափովիչը տեսնում է բնության մեջ։ Որպես բնության մասնիկ, բնության այլ էակների պես մարդն էլ բնության կողմից դրված է որոշակի շրջանակներում, որտեղ նա իր գոյության, գործունեության և զարգացման համար կարող է գտնել բոլոր անհրաժեշտ պայմաններն ու միջոցները։ «Բնութիւնը,—գրում է նա,—ամեն մեկ կենդանի էակին բոլորտիքը շրջանակ կամ սահման մը քաշած է, որուն մեջը անոր պահպանութեանը ու իր զօրութիւնները բանեցնելու համար հարկավոր ըլլող միջոցները կը գտնուին»[8]։ Մարդու օրգանիզմի նորմալ գործունեությունը պայմանավորված է բնության և մարդու փոխհարաբերությունը որոշող որոշակի օրենքներով։ Ինչպես նախամարքսյան մտածողները, այնպես էլ Փափովիչը մարդու և բնության փոխազդեցության մեջ վճռական դերը տալիս է բնությանը, որը պայմանավորում է մարդու ֆիզիկական և մտավոր կարողությունների զարգացումը։ Այս նշանակում է, որ մարդը պետք է գործի մարդկային օրգանիզմի և միջավայրի փոխազդեցությունը կարգավորող օբյեկտիվ օրենքների համաձայն։ Մարդու թշվառության, դժբախտության պատճառը, ըստ նրա, հենց գտնվում է բնությունից «խոտորելու» մեջ։ Թե որ մարդը «բնութեան գրկէն բռնութեամբ մը դուրս քաշելու ըլլայ, շուտ մը իր վրան տկարութիւն, հիվանդութիւն ու մահ կրհասնի»[9],—ասում է նա։ Մարդու էության նատուրալիստական այսպիսի ըմբռնումը, որը «մատերիալիզմի թույլ դրսևորումն էր», 19-րդ դարի 40—50-ական թվականների հայ իրականության մեջ առաջադիմական էր, քանի որ ուղղված էր իդեալիստական և կրոնական այն պատկերացումների դեմ, որոնց համաձայն մարդու էությունը կտրված է բնությունից և ունի գերբնական ծագում։

Բնության և մարդու հարաբերության այս ըմբռնումը, որի համաձայն բնությունը մարդուն դրել է այնպիսի հարաբերությունների ու կապակցությունների մեջ, որ մարդը իր կամքից անկախ անհրաժեշտաբար ենթարկվում

6 Ա. Փ ա փ ո վ ի չ, Արուեստ երկայնակեցութեան, էջ 364։
7 Տե՛ս նույն տեղում, էջ 359։
8 Ա. Փ ա փ ո վ ի չ, Արուեստ երկայնակեցութեան, էջ 1, 1850, Կ. Պոլիս։
9 Նույն տեղում։

է բնության օրինաչափություններին, իր արմատներն ունի 18-րդ դարի ֆրանսիական մատերիալիստների, 19-րդ դարի սկզբի գերմանական լուսավորիչների և Ֆոյերբախի ուսմունքներում։

Այդ գաղափարն արտահայտում է Հոլբախը իր «Բնության սիստեմը» հռչակավոր աշխատության մեջ։ «Մարդը,—ասում է նա,—բնության ձեռքի գործն է, նա գոյություն ունի բնության մեջ, ենթարկվում է նրա օրենքներին, նա չի կարող ազատվել բնությունից, նա չի կարող նույնիսկ մտքով դուրս գալ բնությունից»[10]։

Իդեալիզմի և կրոնի դեմ ուղղված այս հայացքը պաշտպանում են նաև 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի գերմանական առաջավոր մտածողները։ «Բնությունը,—ասում է Գյոթեն,—մեզ տվել է շախմատային տախտակ։ Մեր գործունեության մեջ դուրս գալ նրա սահմաններից մենք ոչ հնարավորություն ունենք և ոչ էլ ցանկություն»[11]։

Բնության բացառիկ դերը մարդու կյանքում արտահայտվում է նրանում, որ նա մարդուն դնելով որոշակի հարաբերությունների ու կապակցությունների մեջ, մարդու նկատմամբ «խնամող ձեռքի» գեր է կատարում։ Այն հանդես է գալիս որպես «լիուլի կենդանության, զորության, վայելմանց ու երջանկության առատաբուխ աղբյուր»[12]։ Փափովիչը ձգտում է ապացուցել, որ «մարդը բարակնալով իր բնական ապրելու եղանակէն կամ կերպէն, պետք է որ խոտորած ըլլայ ու ասանկ բնության սրբազան սահմանէն դուրս ելելը իր թշվառություններուն աղբյուրը սեպուի»[13]։ Հարվածն ուղղելով ժամանակաշրջանում տարածված բազմաթիվ միստիկական ու հոգեպաշտական ուսմունքների դեմ ու բացահայտելով նրանց բացասական էությունը, Փափովիչը գտնում է, թե «ով որ երջանիկ չէ, բնության սահմանէն դուրս ելած է, ու տեղ մը չի կրնար բարեբախտություն գտնել մինչև որ նորէն նույն բնության սահմանը չի դառնայ ու նույն բնության ձայնին մտիկ չընէ»[14]։

Ուրեմն, ըստ Փափովիչի, մարդկանց թշվառության, դժբախտության պատճառը պետք է տեսնել մարդկանց բնությունից խոտորելու, բնության սահմաններից դուրս գալու մեջ։ Ուտոպիստ սոցիալիստներ Օուենը, Դեղամին և այլն համանման դրույթներից բխեցնում են սոցիալիզմի գաղափարը, գտնելով, որ մարդիկ բնությունից ծնվում են հավասար վիճակում, և որ մասնավոր սեփականությունը հակաբնական երևույթ է։ Փափովիչի մոտ այդպիսի եզրակացություն չի կատարվում։ Սակայն այսպիսի հարցադրումով նա ձգտում է հայ ժողովրդի առաջ կանգնած դժվարին խնդիրները լուծելու բանալին փնտրել ոչ թե եկեղեցու և ֆեոդալական ռեակցիայի կողմից քարոզվող երկնավոր փրկության ու աստվածային գերբնական նախախնամության մեջ, այլ այս աշխարհում, բնական օրինաչափությունների ճանաչման ու նրանց ըստ պատշաճին կիրառման մեջ։

Բնության և մարդու փոխհարաբերության Փափովիչի վերև շարադրած հայացքները, ըստ որի մարդու գործունեությունը պայմանավորվում է բնության օրենքներով, նրան չեն հանգեցնում բնության և հասարակական զար-

10 Гольбах, Система природы, стр. 7.
11 «История философии», т. 2, 1957, стр. 31.
12 Ա. Փ ա փ ո վ ի չ, Արուեստ երկայնակեցութեան, էջ 2։
13 Նույն տեղում, էջ 3։
14 Նույն տեղում, էջ 399—400։

գացման մեջ մարդու պասսիվ դերի ֆատալիստական, թեոլոգիական ըմբռնման։ Ճիշտ է, բնությունը մարդուն դրել է որոշակի շրջանակներում, բայց այդ չի նշանակում, թե մարդը բնության կույր գործիքն է։ Նրա կարծիքով «բնությունէն մարդուս համար որոշուած գործելու սահմանը, անչափապես կըրնայ ընդարձակուիլ»[15]։ Հեղինակը ընդգծում է հատկապես մարդու բանականության ակտիվ դերը բնության օրենքներն ըմբռնելու և դրանք իր նպատակներին ծառայեցնելու գործում։ Շնորհիվ իր բանականության զորության մարդը, ըստ Փափովիչի, փոփոխություններ մտցնելով բնության մեջ, լայնացնելով իր գործունեության շրջանակները, բնությունը ծառայեցնում է իր պահանջների բավարարմանը[16]։

Այնքանով, որքանով այս հայացքը օբյեկտիվորեն ուղղված է ֆատալիզմի դեմ, այն առաջավոր է, ընդունելի։

Սակայն բնության ճանաչման և վերափոխման գործում մարդու ակտիվ դերի մասին այս հայացքը տառապում է մի արմատական թերությամբ։ Մարդը, իհարկե, փոխում է, ինչպես Էնգելսն է նշում, ամբողջ աշխարհամասերի ֆլորան և ֆաունան։ Բույսերն ու կենդանիները մարդու ձեռքի տակ այնպես են փոխվում, որ դառնում են անճանաչելի[17]։ Այս պրոցեսում, անկասկած, չափազանց մեծ դեր է խաղում բանականությունը, որովհետև այդ ամենը կրում է կանխամտածված, նախանշված, որոշակի նպատակների հասնելուն ուղղված գործողությունների բնույթ։ Բայց Փափովիչը չհասկանալով մարդկանց պրակտիկ, արտադրական գործունեության նշանակությունը ինչպես բնության երևույթների ճանաչման, այնպես էլ նրանց վերափոխման գործում, վճռական դերը վերապահում է բանականությանը։ Այնուամենայնիվ սխալ կլիներ կարծել, թե նա ամբողջովին անտեսում է մարդու պրակտիկ գործունեության դերը։ Նրա կարծիքով բնության մասնիկ հանդիսացող մարդու գոյությունը պայմանավորված է նրա գործունեությամբ, որովհետև «մարդուն ներքին գրգիռը զինքը անդադար կըյորդորէ, որ գործունեայ ըլլայ ու գործէ։ Բնութիւնը բարձր ձայնով անոր կազդէ որ վայելէ ու վայելմունքով զորութիւն ստանայ անանկ գործքեր ընելու, որ զինքը երկրի վրա տեր կրնեն»[18]։

Բանականության հզորության, կամքի ազատության մասին այս հայացքները Փափովիչին չեն հանգեցնում վոլյունտարիզմին։ Նա նկատելով այս վտանգը, ընդգծում է մարդու կամքի և գիտակցության պայմանավորվածությունը իրականությամբ, բնության օրենքներով։ «Թեպետ և այն կապը՝ որով բնությունը մարդս կապեր կրպտուտեցնե, անանկ թեթև ու թույլ է՝ որ մարդ անով արձակ համարձակ կըրնայ շրջիլ, սակայն ասանկով ալ պետք չէ որ կարծե, թե կույր բախտին ձեռքը թող տրուած է, ու իր ապրելու եղանակը ընտրելը անկանոն կամ պատահական փոփոխություններու տակ ընկած է»[19]։ Այստեղ նկատելի է ազատության և անհրաժեշտության հարցի նկատմամբ գիտական մոտեցումը։ Փափովիչը կռահում է, որ մարդու կամքը ազատ է, եթե նա ճիշտ է ըմբռնել բնության օրենքները և գործում է այդ օրենքներին համապատասխան ձևով։ «Մարդու երկրավոր երջանկութիւնը, առողջութիւնը, զորու-

15 Ա. Փ ա փ ո վ ի չ, Արուեստ երկայնակեցութեան, էջ 36։
16 Տե՛ս նույն տեղում, էջ 14—15։
17 Տե՛ս Ֆ. Է ն գ ե լ ս, Բնության դիալեկտիկա, էջ 195—196։
18 Ա. Փ ա փ ո վ ի չ, Արուեստ երկայնակեցութեան, էջ գ։
19 Նույն տեղում, էջ 38։

թիւնը ու հաստատակամութիւնը կամ հոգեկան ուժավորութիւնը,—ասում է նա,—միայն բնութեան ձեռքէն կրնայ ընդունիլ, այսինքն միայն բնութեան կարգի ու կանոնացը համաձայն կեանք վարելով կրնայ գտնել»[20]։

* * *

Ջնայած մարդու էությանը Փափովիչը մոտենում է նատուրալիզմի դիրքերից, այսուհանդերձ նկատելի են նրա որոշ փորձերը բացատրելու մարդու, մարդկային հասարակության որոշ առանձնահատկությունները։

Մարդը, ըստ Փափովիչի, լինելով բնության էակ և ունենալով որոշ ընդհանուր գծեր կենդանիների հետ, արմատապես տարբերվում է նրանցից շնորհիվ իր ուղղահայաց դիրքի, ձեռքերի օգտագործման, հոդորոշ խոսքի և ուղեղի ու ներվային համակարգի կատարելության հետ կապված հզոր բանականության. «Մարդը իրեն շիտակ (կանգուն) կեցուածքին ու քայլուածքին և երկու ձեռքն ալ ազատաբար բանեցնելուն համար, իրեն կատարեալ խոսելուն և ամեն բանէն ավելի իրեն կատարեալ մտածելու գործարաններուն պատճառովը ամեն տեսակ կենդանիներէն ավելի բան մրն է, ու երկրիս ամեն կենդանի էակներէն ավելի բարձր կարգի կամ սահմանի մը մեջ կը մտնէ»[21]։ Կենդանական աշխարհի և մարդու հիմնական տարբերությունը նրանումն է, որ մարդը հասարակական կենդանի է։ Հասարակությունից դուրս մարդը «և ոչ իբրև անբան կենդանի կրընար ըստ օրինի ապրիլ»[22]։ Հասարակությունն է մարդուն մարդ դարձնում։ Եթե «մարդ իր նմաններէն, այսինքն մարդիկներէն հեռացած ու միայն անկենդան ստեղծուածներու, տունկերու և անասուններու մեջը մնալու ըլլար, միայն ասոնց կնմաներ»[23]։ Հասարակությունից դուրս մարդը չի կարող օգտագործել իր մտավոր և ֆիզիկական կարողությունները. «իր մարմնին սքանչելի յարմարութիւնները ու իր հոգիին զարմանալի զօրութիւնները,—ասում է Փափովիչը,—առանց ընկերութեան պարապ տեղ անոր տրուած կըլլային»[24]։ Այնուամենայնիվ Փափովիչը չի կարողանում հասկանալ հասարակության էությունը, հասարակական արտադրության պրոցեսի և աշխատանքի դերը մարդու ձևավորման և զարգացման գործում։

Նշելով հասարակության կարևորագույն դերը անհատի զարգացման գործում, Փափովիչը փորձում է ցույց տալ հասարակական կյանքի զարգացման հիմնական պատճառները, մարդկության առաջընթացին արգելակող և նպաստող գործոնները։

Որպես լուսավորիչ, նա հասարակության զարգացման վճռական գործոնը համարում է լուսավորության և գիտության տարածումն ու զարգացումը։ Փափովիչը «ծուռ ու սխալ» և պատմական փաստերը անտեսող կարծիք է համարում կղերաֆեոդալական գաղափարախոսների այն ռեակցիոն հայացքը, թե իբր տիրող հասարակարգում գոյություն ունեցող բռնությունները, անիրավությունները և այլ չարիքներ արդյունք են լուսավորության և կրթության։ Նրա

20 Ա. Փ ա փ ո վ ի չ, Արուեստ երկայնակեցութեան, էջ 399։
21 Նույն տեղում, էջ 8։
22 Նույն տեղում, էջ 18։
23 Նույն տեղում, էջ 16։
24 Նույն տեղում, էջ 17—18։

կարծիքով, ընդհակառակը, «ուսումը իմաստութեան, իմաստութիւնն էլ երջանկութեան աղբյուրն է»։ Պատմության ուսումնասիրությունը, ըստ Փափովիչի, ակներևաբար ապացուցում է այս դրույթի ճշմարտությունը։

Չկարողանալով հասկանալ սոցիալական չարիքների ու անարդարությունների իսկական պատճառը, Փափովիչը գտնում է, որ ուսման, կրթության միջոցով է, որ յուրաքանչյուր անհատ, յուրացնելով նախորդ սերունդների ձեռք բերած դարավոր նվաճումները, «մարդկային ազգը կատարելութեան պինդ բարձր աստիճանին կմոտեցնէ» և այսպիսով կնպաստի անարդարությունների վերացմանը։ Ուսման, կրթության միջոցով է, որ մարդը զինվում է բնության մասին ճշգրիտ գիտելիքներով և դրանք պրակտիկ կյանքում կիրառելու ունակությամբ։ «Կրթութիւնը մարդս բնութեան վրա իշխող կրնե ու անոր կարողութիւն կտայ նոյն բնութիւնին ամեն գործքերը իրեն օգտակար ընելու»[25]։

Փափովիչը խիստ դատապարտում է գոյություն ունեցող կրթության և դաստիարակության սխոլաստիկ սիստեմը, ցույց տալիս նրա արմատական թերությունները և գնում կրթության ու դաստիարակության բովանդակության և մեթոդների խիստ փոփոխության պահանջ։ Նա գտնում է, որ կրթությունը և դաստիարակությունը պետք է համընդհանուր բնույթ ունենան և իրագործվեն մարդու էությանը համապատասխանող եղանակներով ու մեթոդներով։ Առանձնապես պետք է հաշվի առնվի մարդու հոգեկան և ֆիզիկական կարողությունների զարգացման օրինաչափությունները ու առանձնահատկությունները։ Այս նպատակով մանկավարժությունը պետք է օգտագործի հոգեբանության, ֆիզիոլոգիայի և իմացաբանության տվյալները։ Այսպիսով նա հանդես է գալիս որպես մանկավարժության նոր սկզբունքների ջատագով։

Հասարակական կյանքի առաջընթացին նպաստող հիմնական գործոններից մեկն էլ, ըստ Փափովիչի, բարոյականությունն է։ Նա գտնում է, որ այնպես, ինչպես մարդը առանց հասարակության չի կարող գոյություն ունենալ, այնպես էլ հասարակությունը «առանց փոփոխակի օգնութեան ու սիրոյ և առանց բարեբարոյութեան» չի կարող «հաստատ մնալ»[26]։

Այնտեղ, որտեղ չկա բարոյականություն, հայտարարում է Փափովիչը, այնտեղ «ոչ մարդկային կատարելութիւն, ոչ մարդկային երջանկութիւն և ոչ ալ մարդկութիւն կրրնայ գտնուիլ»[27]։ Չնայած Փափովիչի բարոյագիտությունը իր վրա բացահայտորեն կրում է իդեալիստական և կրոնական էթիկայի ազդեցությունը, այնուամենայնիվ գոյություն ունեցող բարոյական սկզբունքների նրա տված քննադատությունը, մարդասիրության, ընկերասիրության, մարդկանց և ազգերի միջև փոխադարձ օգնության անհրաժեշտության մասին նրա առաջադրած հայացքները ներկայացնում են որոշ հետաքրքրություն։ Հակադրվելով տիրող դասակարգի գաղափարախոսներին, նա գտնում է, որ «ունևորությունը և արտաքին քաղաքավարական վարմունքները» չպետք է համարվի բարեբարոյություն։ Իսկական բարոյականությունը «այն գեղեցիկ կապն է, որ մարդը մարդու ու գերդաստանը գերդաստանի հետ կկապե և ժողովուրդները կամ ազգերը իրարու օգտին մեկը մեկալին հետ կմիաբանէ»[28]։

---

25 Ա. Փ ա փ ո վ ի չ, Արուեստ երկայնակեցութեան, էջ 28։

26 Նույն տեղում, էջ 329։

27 Նույն տեղում։

28 Նույն տեղում։

Այսպիսով, եթե մարդը որպես բնության մասնիկ իր երջանկությունը «միայն բնության կարգի ու կանոնացը համաձայն կեանք վարելով կրնայ գտնել», ապա որպես հասարակական կենդանի, որպես հասարակության անդամ, նա պետք է պահպանի որոշակի բարոյական սկզբունքներ, կիրառի դրանց իր առօրյա կյանքում։

* * *

Իր իմացաբանական հայացքներով Փափովիչը հիմնականում սենսուալիստ է և պնդում է, որ ծանոթությունը կամ ճանաչումը «զգայական հայեցուածքէն կամ զգացումէն պետք է սկսել»[29]։ Իր սենսուալիզմը հիմնավորելու համար նա առաջին հերթին դիմում է ֆիզիոլոգիայի նվաճումներին։

Շարունակելով հայ փիլիսոփայության մեջ խոր արմատներ գցած ավանդությանը, Փափովիչը գտնում է, որ մարդուն պետք է դիտել որպես իրար հետ սերտ միացած հոգու և մարմնի միասնություն, որտեղ ֆիզիոլոգիականը հանդես է գալիս որպես հոգեկանի հիմք։

Մարդկային մարմնի օրգանները իրենց կատարած ֆունկցիաների տեսակետից նա բաժանում է երկու խմբի՝

ա) «կենաց կամ կենդանութեան գործարանները», այսինքն թոքերը, սիրտը, արյան և զարկի երակները, մարսողության և նյութափոխանակության այլ օրգանները, որոնք կատարում են մարմինը պահպանելու, կատարելագործելու և կենդանի մարմին արտադրելու ֆունկցիաներ։ Մարդու այս օրգանները, իրենց որակով և կատարած ֆունկցիաների տեսակետից, ըստ Փափովիչի, որակապես չեն տարբերվում «կատարյալ կամ կաթնակեր կենդանիների» համապատասխան օրգաններից։ Այս փաստը վկայում է մարդու և կենդանական աշխարհի կապը.

բ) «մտածելու և կամենալու» օրգանները, որոնք իրականացնում են բարձր հոգեկան գործունեությունը։ Այս տեսակետից մարդու և կենդանիների միջև գոյություն ունի էական, որակական տարբերություն։ Մարդու «մտածելու և կամենալու գործարանները երկրիս ամեն կենդանիներուն նոյն գործարաններէն իրենց մեծութեանը, արհեստական շենքին ու կատարելութեանը դիաց այնչափ ավելի գերազանց է, որ մարդս անով բոլոր երկրիս ստեղծուածներուն մեջը իբր ամենակատար էակ մը ու մասնավոր և բարձրագույն կարգի կենդանի մը ըլլալը կրցուցնէ»[30]։ Այսպիսով ստացվում է, որ մարդը կենդանիներից ֆիզիոլոգիապես տարբերվում է իր բարձրագույն ներվային համակարգով։

Հոգեֆիզիոլոգիական պրոբլեմի ամենակարևոր հարցը, որը հատկապես սրված էր 19-րդ դարի կեսերի բնագիտության և փիլիսոփայության մեջ, Փափովիչը լուծում է մատերիալիստական ոգով։ Նա անվերապահորեն պնդում է, որ մարդկային հոգեկան պրոցեսները նրա ներվային համակարգի և հատկապես ուղեղի գործունեության արդյունքն են, որ հոգեկանի առաջացումը և զարգացումը պայմանավորված է մարմնականով, նյութականով։ Կանգնած լինելով ժամանակի գիտության զարգացման աստիճանի վրա, նա պնդում է.

29 Ա. Փ ա փ ո վ ի չ. Արուեստ երկայնակեցութեան, էջ 366։

30 Նույն տեղում, էջ 8։

«Ով որ դիտե թե մտածող էակը իրեն ուղեղով ուրիշ ստեղծուածներու հետ կրկապակցի կամ հաղորդակցութիւն կունենայ, ու աս ուղեղին մեջը մտածելու համար հարկաւոր ըլլող ամեն նիւթերը կառնուին, կրժողուին ու կրպահուին, ով որ կրնայ հասկանալ թե մեծ ուղեղը պզտիկէն ավելի կարողութիւն ունի զգայական պատկերներ ժողվելու և պահելու ու ով որ առիթ ունեցել է կենդանիներու և մարդկանց վրա համեմատական դիտողություններ ընելով համոզուիլ, որ ուղեղին մեծութիւնը մտածելու կարողութեան ուժին և կատարելութեանը հետ շատ մեծ կապակցութիւն ունի, անիկա դիւրաւ կրնայ իմանալ, որ մարդուս բարձրագույն հոգեկան զորութիւնով գործելու համար որոշուած ըլլալը իր մարմնոյն կազմուրեն կամ ուղեղին ու ջղերուն կազմուածքէն յառաջ կուգայ, կամ թէ բսենք՝ ասոնց վրա հիմնված է»[31]։

Քանի որ հոգեկանը «մարմնոյն կազմութենէն կամ ուղեղին ու ջղերուն կազմուածքէն յառաջ կուգայ», իսկ ուղեղը և ջղերը նյութական են, ապա այստեղից նա եզրակացնում է, որ «մտածելու ու կամենալու գործարանները», նրանց «ուժն ու ազդեցությունը միայն կենդանական (կամ մարմնավոր) կեանքէն կախուած են»[32], նրանց կատարյալ կամ անկատար լինելը «կեանքին զորավոր ու տկար ըլլալէն կախում ունի»[33]։

Հոգեկան կարողությունների պայմանավորվածությունը ուղեղով, զգայարանների կատարելությամբ, ըստ Փափովիչի, ապացուցվում է գիտության և բժշկական պրակտիկայի կողմից։ Այն ակներևորեն դրսևորվում է երեխայի մոտ։ Քանի դեռ երեխայի մարմնական կարողությունները չեն զարգացած, նրա մտավոր ընդունակությունները ևս չեն բացվում։ Դրանց կատարելագործումը ընթանում է մարմնական զորությունների զարգացման զուգընթաց։ Ակներև է այդ դրության հակահիգեալիստական, հակակրոնական ուղղվածությունը։ Եթե իդեալիզմն ընդհանրապես փորձում է ժխտել այն ճշմարտությունը, որ գիտակցությունը որոշ ձևով կազմակերպված մատերիայի հատկությունն է, ապա Փափովիչը դեռևս 19-րդ դարի կեսերին աշխատում է հիմնավորել մատերիալիստական այն թեզը, թե մարդը մտածում է ուղեղի օգնությամբ, թե հոգեկանը ուղեղի հատկությունն է, ուղեղի ֆունկցիան է։ Պարզ է նաև այն, որ քննադատելով կամքի ազատության վոլունտարիստական տեսակետը, Փափովիչը գտնում է, որ մարդու կամային գործունեությունը այլ գործունեությունների հետ միասին պայմանավորված է նաև մարդու ներվային համակարգի օրինաչափություններով։ Այսպիսի հարցադրումը, անկասկած, առաջավոր քայլ էր հայ բնագիտական ու փիլիսոփայական մտքի պատմության մեջ։

Մարդկային հոգեկան պրոցեսները ու կարողությունները բացատրելով ներվային համակարգի գործունեությամբ, Փափովիչը միաժամանակ փորձում է բացահայտել հոգեկան պրոցեսների ֆիզիոլոգիական հիմքը։

Որպես բժիշկ լավատեղյակ լինելով մարդու ֆիզիոլոգիական կառուցվածքին, նա ցույց է տալիս, որ ուղեղը լինելով ներվային համակարգի կենտրոնը, ամբողջ օրգանիզմում ունի իր հաղորդակցության կանալները՝ «սենսոր ներվերը», որոնք զգայարաններից տարբեր գրգիռներ են բերում դեպի ուղեղը, որտեղ և նրանք գիտակցվում են։ Մյուս կողմից, նա նկատում է, որ ուղեղից

---

31 Ա. Փ ա փ ո վ ի չ, Արուեստ երկայնակեցութեան, էջ 10 (ընդգծումները մերն է—Է. Հ.)։

32 Նույն տեղում, էջ 26։

33 Նույն տեղում։

դուրս են գալիս ներվերի մի այլ խումբ (մոտոր ներվեր), առանց որի մարդ չի կարող իր միտքը «իրեն ու բոլոր աշխարհի համար իրոք գործ դնել»[34]։

Ըստ Փափովիչի ոչ միայն հոգեկանի սուբստրատն է նյութական, այլ նաև բովանդակությունը։ Նա չի համաձայնվում ագնոստիկական այն տեսակետի հետ, թե բնության էությունն անճանաչելի է, թե մարդու բանականությունն անկարող է թափանցելու բնության գաղտնիքների մեջ։ Ըստ հեղինակի «բնությունին լեզուն իր պարզությունովը սքանչելի է, ու իր անխաբությունովը կամ ստուգությունովը աստվածային է»։ Բնության մեջ ոչինչ խորհրդավոր չկա։ Մարդիկ կարող են և պարտավոր են ճանաչել բնության օրենքները ու օրինաչափությունները և գործելով դրանց համապատասխան՝ հասնելու ցանկացած նպատակին։ Փափովիչը ընդգծում է բնության ուսումնասիրության նշանակությունը մարդկային կյանքում։ Բնությունը և մարդու էությունը ճանաչելու համար պետք է դիմել բնության ուսումնասիրությանը։ «Բնությեան ձայնը շատ դիւրաւ լսելու ձայն է»[35],—ասում է նա։ Բնության ուսումնասիրության, բնության ճանաչման պահանջը շատ արժեքավոր է և բնութագրում է Փափովիչի աշխարհայացքի առաջադիմական, անտիսխոլաստիկական բնույթը։ Նա պնդում է, որ հոգեկանի աղբյուրը բնությունն է, մտածողական գործունեությունը պայմանավորված է բնությունից ստացվող տպավորություններով։ Մարդու «մտածութիւններուն առարկաները (նիւթերը) ազատ բնութեան մեջն են»[36]։ Բնությունն է մտածելու համար նյութ տալիս, չի կարող գոյություն ունենալ մտածողություն՝ առանց մարդու զգայարանների վրա բնության առարկաների ազդեցության։

Ընդունելով, որ զգայական ըմբռնումները, պատկերները ծնվում են «դրսի իրերուն (առարկաներուն) ազդեցութիւնովը արտաքին զգայարաններուն վրայ»[37], որոնք (զգայությունները) այդ իրերը «չեն կրնար ծածկել կամ պատել»[38], Փափովիչը դրանով իսկ իր իմացաբանությունը ուղղում է դեպի մատերիալիզմի հունը, իրեն սահմանաղատում զգայության սուբյեկտիվ իդեալիստական ըմբռնումից։

Փափովիչը տարբերում է երկու տեսակի զգայարաններ ու զգայություն՝ ներքին և արտաքին։ Այդպիսի բաժանում նկատելի է մի շարք հայ մտածողների (Ֆիզիկա Պողոս, Գ. Հարությունյան, Ա. Գարագաշյան և այլն) մոտ։ Սակայն նա ներքին զգայություն ասելով չի հասկանում ներքին ռեֆլեքսիա, նյութական իրականության հետ կապ չունեցող իմացաբանական պրոցես։ Նրա մոտ այն մի հասկացություն է ուշադրության, երևակայության և հիշողության հոգեկան պրոցեսներն հավաքականորեն անվանելու համար։ Արտաքին զգայարանները անմիջապես ազդվելով իրականությունից ստացված գրգիռներից, այն փոխանցում են ներքին զգայարաններին, որոնք մի տեսակի անցման օղակ են զգայության և գիտակցության, զգայարանների և ուղեղի միջև։ Արտաքինները «զգալու նյութը կտան», «կզարթնեցնեն» ներքին զգայարանները, որոնք ստացված գրգիռը «կընդունեն (կըմբռնեն) ու անիկա կպահեն, որ նկատվելու

34 Ա. Փ ա փ ո վ ի չ, Արուեստ երկայնակեցութեան, էջ 374։
35 Նույն տեղում, էջ 322։
36 Նույն տեղում, էջ 366։
37 Նույն տեղում, էջ 315։
38 Նույն տեղում։

ու զննելու համար միշտ պատրաստ մնայ»[39]։ Փափովիչի կարծիքով ներքին զգայությունների (զգայարանների) «գործարաններուն տեղը գլխուն վերի և առջևի դին է, որ է մեծ ուղեղին մեջը»[40]։

Քննարկելով այդ երկու տիպի զգայարանների փոխհարաբերության հարցը, Փափովիչը, որպես սենսուալիստ, գերապատվությունը տալիս է արտաքինին, չանտեսելով ներքին զգայությունների յուրահատկությունն ու նշանակությունը։

«Ներքին զգայարանքները չափե ավելի նեղի գնելը արտաքին զգայարանքներուն անոնց վրա ունեցած բոլոր ազդեցութիւնը կամ իշխանութիւնը անզոր ու անգործ կընե ու ստույգ կամ իրական բաներու (առարկաներու) տեղ սուտ ու երևակայական բաներ կհանճարե, կհնարե»[41]։ Ուրեմն, երևակայության, մտածողության բովանդակության որոշողը արտաքին աշխարհն է։ Եթե որևիցե ձևով երևակայությունը կտրվում է իրականությունից, ապա այն կկորցնի իր իմացական նշանակությունը ու «ստույգ կամ իրական բաներու (առարկաներու) տեղ սուտ ու երևակայական բաներ կը հանճարէ, կըհնարէ»։

Ներքին զգայարանների հարցը ինչքան էլ մտացածին լինի, այնուամենայնիվ խոսում է այն մասին, որ Փափովիչը նկատելով զգայական ու տրամաբանական ճանաչողական աստիճանների կապն ու որակական տարբերությունը, աշխատել է այն որևէ կերպ բացատրել։ Նա, նախամարքսյան շատ մտածողների նման չի ըմբռնել այն դիալեկտիկական թռիչքը, որ գոյություն ունի ճանաչողական այդ երկու աստիճանների միջև։ Նա չի հասկացել այն տրամաբանական գործողությունների դերն ու նշանակությունը, որոնց բովով անցնելով, մտապատկերները մարդկային պրակտիկայի ընթացքում դառնում են հասկացություններ։ Փափովիչի ժամանակ դեռևս մշակված չէր այն տեսակետը, որ մտապատկերները ունենալով և զգայական և աբստրակտ բնույթ, որոշ առումով կապում են զգայականն ու տրամաբանականը։ Այնուամենայնիվ պետք է նշել, որ ներքին զգայությունների մասին խոսելիս նա հաճախ նկատի ունի հենց մտապատկերը, այն հետքը, որ ուղեղում մնացել է զգայությունից ու ընկալումից հետո և որը համապատասխան առիթներով կարելի է զարթնեցնել։ Այսպիսով, նա որոշ չափով նպաստում է իմացաբանական ու հոգեբանական այդ կարևոր հարցի լուծմանը։

Բայց ի՞նչ է, ըստ Փափովիչի, իրենից ներկայացնում մտածողությունը, ինչպիսի՞ հարաբերություն գոյություն ունի մտածողության և զգայության միջև։

19-րդ դարի կեսերին մտածողության և զգայության հարաբերակցության հարցի մեկնաբանման ժամանակ հայ փիլիսոփաների մոտ նկատվում է երկու տենդենց։ Եթե փիլիսոփաների հիմնական մասը, զարգացնելով հայ իմաստասիրության պատմության նոմինալիստական ավանդությունները և ելնելով իմացության սենսուալիստական սկզբունքից, մեր բոլոր գիտելիքների աղբյուրը համարում է զգայությունները, ապա Ֆիզիկա Պողոսը, Ռուսինյանը, որոշ չափով Գարագաշյանը և այլն, չբավարարվելով ընդհանուր գիտելիքների ծագման աղբյուրի մասին նեղ էմպիրիստական տեսակետներով, զգայությունների դերը բոլորովին չժխտելով հանդերձ, ընդհանուր սկզբունքների, կատեգորիանե-

39 Ա. Փ ա փ ո վ ի չ, Արուեստ երկայնակեցութեան, էջ 315։

40 Նույն տեղում, էջ 316։

41 Նույն տեղում, էջ 319։

րի առաջացումը կապում էին փորձից բոլորովին անկախ, բանականության հետ, որը տանում է նրանց դեպի ապրիորիզմ, իդեալիզմ[42]։ Փափովիչը չի պաշտպանում այս վերջին տեսակետը։

Չթերագնահատելով զգայության դերը իրականության իմացության պրոցեսում, Փափովիչը գտնում է, որ զգայության հետ մտածողության կապը երբեք չի նսեմացնում մտածողության դերը իրականության ճանաչման գործում։ Մտածողությունը չի կարելի անջատել զգայություններից, բանի որ իրականության հետ նա կապվում է միայն զգայական պատկերների միջոցով։ Զգայական պատկերներն են, որ ապահովում են մտածողության գործունեությունը՝ նրան մատակարարելով անհրաժեշտ մտածողական նյութ. «Մտածելու համար ամեն նիւթը ներքին զգայարաններուն կառնուի»[43]։ Այս պատճառով էլ ոչ մի կասկած չի կարող լինել, որ իմացությունը սկսվում է փորձից, կենդանի հայեցողությունից, մարդու զգայարանների վրա բնության անմիջական ազդեցության միջոցով։ Զգայարանների օգնությամբ «կամաց-կամաց ու որոշակի ըմբռնած ու մտքին առջեր խել մը ատեն կեցող առարկան ներքին զգայարանքին վրա անեղծ կրտպավորի ու մարդը ուղած ատենը անիկա միտքը կբերի, կլ հիշե... Ասանկ բնութիւնը նկատելէն ու բնական առարկաներուն հայեցուածքէն մտքին մեջը եկող ըմբռնումները ու մարքէն ալ բանիւ (բանականութեան) եկող համոզումը ազդողական ու ճշմարիտ կրլլան ու կամքը ապահովապես կըշարժէն այն ըմբռնուած գաղափարներուն համաձայն գործելու»[44]։

Հետևաբար, չի կարելի մտածողության գործունեությունը դիտել զգայական ըմբռնումներից անկախ։ Օրամաբանական իմացության ճշմարտացի բնույթը պայմանավորված է ոչ թե մտածողության կողմից զգայական ըմբռնումների երևակայական անտեսման մեջ, ինչպես պնդում էին ռացիոնալիզմի ներկայացուցիչները, այլ այդ ըմբռնումների հետ մտածողության անխզելի կապի մեջ, նրանց տվյալների մանրազնին ուսումնասիրության մեջ։

Մտածելը կամ «մտմտալը,—ըստ Փափովիչի,—ուրիշ բան չէ, բայց եթե զգայական տպավորութիւններուն (այսինքն՝ արտաքին զգայարանքներուն միջնորդութիւնովը ներքին զգայարանքներուն վրա մնացած կամ տպավորված ազդեցութիւններուն) մեր մտացը հայեցուածներուն հետ ունեցած կապակցութիւնը, դարձեալ աս հայեցուածներուն ավելի ևս ընդարձակ ըմբռնումներուն հետ կապակցութիւնը, ու աս ըմբռնումներուն ալ շատ բարձր ու ամեն բան նկատող գաղափարներուն հետ կապակցութիւնն է»[45]։ Այս նշանակում է, որ մտածողությունը ընդհանրացման մի պրոցես է, որտեղ միտքը ավելի նեղ ծավալ ունեցող հասկացություններից բնթանում է դեպի ավելի ու ավելի լայն ծավալ ունեցող հասկացությունները, կազմավորում կատեգորիաներ։ Նույնիսկ աստծո հասկացությունը, նկատում է Փափովիչը, առաջացել է այդպիսի վերացարկման պրոցեսի հետևանքով։

Իմացության մտածողական ձևի առանձնահատկությունները Փափովիչը տեսնում է նրա համադրող և ընդհանրացնող կարողությունների մեջ։ Բանական գործությամբ, ըստ նրա, մարդը կարողանում է իրեն «պեսպիսով ու ցրուած

---

42 Տե՛ս Տրամաբանություն Ֆիզիկա Պողոսի, 1877, Կ. Պոլիս, էջ 64։

43 Ա. Փափովիչ Արուեստ երկայնակեցութեան, էջ 324։

44 Նույն տեղում, էջ 366։

45 Նույն տեղում, էջ 323։

խորհուրդները կանոնավորեալ միութիւնի մը ժողվելու և զատ-զատեալ նկարները կամ երևակայած բաները մեկ տեղ բերելով ու բաղադրելով ընդարձակ ըմբռնումներ կամ խորհուրդներ կազմելու»[46]։ Մտածողության այս ընդունակության հետ սերտ առնչություն ունի մտքի անալիտիկ գործունեությունը։ Մարդկային մտքի «բոլոր փոյթը ու աշխատութիւնը,—ասում է նա,—այն է, որ այլ և այլ ու կերպ կերպ երևակայած բաները (պատկերները) պարզեցնեն, կամ թե բսենք՝ միացնէ, ու աս պարզեցնելը ան աստիճանի և այնչափ բլլայ, որ կատարելութեան ու կատարյալ միութեան հասնի»[47]։

Մտածողությունը, որն իրականացվում է հասկացությունների միջոցով, իրականության արտացոլման, իմացության բարձրագույն ձև է։ Փափովիչը չափազանց բարձր է գնահատում բանականության դերը մարդու կյանքում։ Նրա կարծիքով, բանականությամբ «մարդս կլիմաներու խստութեանը վրա կրտիրե. ամեոուան ցուրտը կտարացնե, ու ան տեղերը, ուր որ ի բնութէնէ խոտ մրն ալ չի բուսնիր ցան կը ցանէ ու կրհնձէ։ Անոր զորութիւնովը լեռները իրենց տեղերէն կրվերցնէ, ժայռեր կրդիզէ, գետերու ճամբայ կրանայ, ծովուն արգելքներ կրդնէ, ջրի վրա կրքալէ ու օդին վրա կթռչի։ Անով երկնից աստղերուն ճամբուն վրա կրպտտի, անոնց ընթացքը ու ամեն փոփոխութիւնները մինչև մեկ վայրկյանի չափ՝ կդիտէ ու կդուշակէ, երկրի տեսիլը կրփոխէ, տունկեր կայլակերպէ, պինդ զարհուրելի ուժով ու կատաղի զաղանները կմեռցնէ, օդտակարները կրսանձէ, ու մենակ իրեն համար կապրեցնէ ու կաշխատեցնէ, ինչ երկրրցունեմ, բանականութիւնով մարդս ինքը պինքը բոլոր երկրիս տեր կրնէ»[48]։

Սակայն հարցին մոտենալով անտրոպոլոգիզմի դիրքերից, Փափովիչը մարդու իմացական բոլոր կարողությունները հիմնականում պայմանավորում է նրա անատոմիական կառուցվածքի առանձնահատկություններով և առաջին հերթին՝ ուղեղի բարդ կառուցվածքով, զգայարանների կատարելությամբ։ Այստեղ արտահայտվում է Փափովիչի աշխարհայացքի հակակրոնական, հակիդեալիստական ուղղվածությունը՝ չնայած թերի է մարդու ուղեղի և կենդանիների ուղեղի միջև տարբերություն նկատելու և մարդկային ներվային համակարգի կատարելությամբ մարդկային բանականություն բացատրելը։ Անհրաժեշտ է բացահայտել դրանց բուն պատճառը, մի հարց, որ նախամարքսյան փիլիսոփայությունը, բնագիտությունը, «նույնիսկ Դարվինի դպրոցին պատկանող ամենից ավելի մատերիալիստորեն տրամադրված բնախուզները» (Էնգելս) չկարողացան լուծել։ Հասարակական կյանքի ըմբռնման մեջ լինելով իդեալիստ, նա չկարողացավ տեսնել այն դերը, որ կատարել է աշխատանքը մարդու բանականության զարգացման պրոցեսում։ Նրա կարծիքով միակ ուժը, որ հիմք է ծառայել մարդու բանականության զարգացման համար, պետք է տեսնել բնության ազդեցության մեջ։ «Մարդս իրեն բարձրագույն մտավոր գործունեութիւնովը ամեն ստեղծուած (անբան) կենդանիներէն վեր ելլելու կամ առաջ երթալու համար ուսկի՞ց ուժ առած է»,— հարցնում է նա և պատասխանում՝ «հայտնի է, որ բնութեան ձեռքէն»[49]։ Ակնհայտ է Փափովիչի այս բացատրության սահմանափակվածությունը։ Նա պատկանում է նախամարքսյան այն

46 Ա. Փ ա փ ո վ ի չ, Արուեստ երկայնակեցութեան, էջ 12։
47 Նույն տեղում, էջ 323։
48 Նույն տեղում, էջ 14—15։
49 Նույն տեղում, էջ 321։

մտածողների թվին, որոնք մի կողմից տեսնում էին բնությունը, մյուս կողմից մտածողությունը, բնությունը համարելով մտածողության հիմքը, աղբյուրը։ Մինչդեռ մտածողության «ամենաէական և մերձավորագույն հիմքը հենց բնության փոփոխումն է մարդու կողմից, այլ ոչ միայն բնությունն իբրև այդպիսին»[50]։

Ելնելով իր այն սկզբունքային դրույթից, որ բնության մեջ ամեն ինչ գտնվում է աստիճանական զարգացման պրոցեսում, Փափովիչը փորձում է ցույց տալ նաև մարդկային իմացական կարողությունների էվոլյուցիան։

Իմացության աստիճանական զարգացումը ինչպես ընդհանուր մարդկության իմացության պատմության մեջ, այնպես էլ յուրաքանչյուր անհատի գիտակցության զարգացման ընթացքում, ըստ Փափովիչի, անառարկելի փաստ է։

Իմացության զարգացման հիմնական միջոցը Փափովիչը տեսնում է մարդու ֆիզիկական ու մտավոր կարողությունների բազմակողմանի կատարելագործման, կրթության ու դաստիարակման մեջ։ Մտավոր դաստիարակության միջոցով յուրաքանչյուր սերունդ յուրացնում է իր նախորդների բազմամյա փորձը, զարգացնում այն ու օգտագործում իր պրակտիկ կյանքում, որի հետևանքով իր գիտելիքներով «հայրը ավելի առաջ կեռթայ, քան թե պապը որդին ավելի կառաջանայ, քան թե հայրը»[51]։ Իմացության էության այսպիսի ըմբռնումը, որն իր մեջ պարունակում է արժեքավոր որոշ էլեմենտներ, չի վերացնում մետաֆիզիկական մատերիալիզմի հիմնական սահմանափակվածությունը դիալեկտիկան իմացության թեորիայում կիրառելու անկարողությունը։

Լուսավորության ու բանականության զարգացումը համարելով հասարակության զարգացման չափանիշ ու ելնելով իմացության զարգացման սկզբունքից, Փափովիչը մարդկային հասարակության պատմությունը բաժանում է չորս դարաշրջանների։ «Մարդկային ազգին առաջին դարը կամ ժամանակը բիրտ զգայականության ժամանակն էր։ Ասկից ետքը,—գրում է նա,—եկավ առասպելաց ու առասպելական երգերու դարը, ետքը պատմության ժամանակը, ասկից ետքն ալ եկավ փիլիսոփայությունը»[52]։

Ակներև է հասարակական կյանքի այս բացատրության իդեալիստական բնույթը։ Փափովիչը չի տեսնում, որ իմացության ծագման և զարգացման հիմքը մարդկանց արտադրական գործունեությունն է։ Սակայն արժեքավոր է, որ նա հասարակական կյանքը դիտում է զարգացման մեջ։

Այսպիսով, Փափովիչը պատկանում է 19-րդ դարի առաջին կեսի այն մտածողների թվին, որոնք աշխատել են դուրս գալ ֆեոդալական գաղափարախոսության շրջանակներից ու այդպիսով նպաստել հայ իրականության մեջ առաջավոր բնագիտական և մատերիալիստական փիլիսոփայության մտքի ծագմանն ու զարգացմանը։

---

50 Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, էջ 257։

51 Ա. Փափովիչ, Արուեստ երկայնակեցութեան, էջ 361։

52 Նույն տեղում, էջ 365։